

Պ Ա Յ Մ Ա Ն Բ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան 12 Ժր.

Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւր մեկ ծրարով

Տարեկան 14 Ժր.

Վեցամսեայ 7 Ժր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2 60 Տօր.

Վեցամսեայ 1.50 Տօր.

ԿԱՆԽԻԿ

ԹԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵԹ.



Լ Ր Ա Կ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Ց Է

Redaction du Journal

«Ira vounk»

(Bulgarie) VARNA

Редакция

на ВѢСТНИКЪ

«Иразункъ»

ВАРНА

Գրութիւնք հոս չեն

ընդունիր

## ՕՆ ԱՌԱՋ

Գահիրէէ ստացուած թուուցիկը՝ որ եղբայրական մութեան կը հրաւիրէր բոլոր օսմանցիները առանց ցեղի և կրօնի խտրութեան, տապալելու համար արդի բռնակալ կառավարութիւնը եւ անոր տեղ վերահաստատելու Ազգային ժողովը (Մէճլիսի Մէպուսան), հրատարակեցինք մեր նախորդ թուով:

Հաւանականաբար թուրք հայրենասէրներու արտագրութիւնը եղող այդ թուուցիկը իր արտաքին երեւոյթներով ու բառական իմաստով համակրելի է բոլոր անոնց որոնք ըմբռնած են իրենց վիճակին ծանրութիւնը, որոնք իսկապէս դժոխային կեանք մը կապրին օսմանեան սահմաններուն մէջ և որոնք զրկուած են մարդկային ամեն իրաւունքներէ: Այդ վիճակին, այդ դժոխային կեանքին, այդ զրկանքին ծարուծութիւնը Հայէն աւելի կորոշ ոչ մէկ ցեղ չէ եղեր թիւրքերէ, մէջ և չկայ հետեւապէս ներկայ բռնակալութիւնը տապալելու պէտքը, անհրաժեշտութիւնը աւելի լաւ և աւելի կանուխ ըմբռնողը Հայը կրնար ըլլալ և եղած է արդէն: Այդ նպատակաւ, այսինքն բռնակալութեան լուծէն ազատելու և իր դրացիներուն հետ ազատ կեանք և հաւասար իրաւունքներ վայելելու համար Հայուն յանձն առած զոհաբերութիւնը, վերջին քսան տարիներուն մէջ մահաւանդ, չը բաղդատուի որ և է ցեղի զոհաբերութեանց հետ Հայը իր երկրին, իր բնակած նահանգներուն բարենորոգումը պահանջած է ընդհանրապէս խաղաղ և քիչ անգամ ինքնապաշտպանողական տարրական միջոցներով: Բայց հասարակաց հայրենիքին համար Հայուն ներկա կայացուցած այդ պահանջը, ոչ թէ միայն ցարդ ուժ չէ գտեր դրացի մահմետական բնակչութեան կողմէ, այլ այդ արդար պահանջը իբր առիթ և պատըրուակ ծառայած է իր դրացիներ

ուն որ զինք գիշատեն գայլերու ձեռք ինկած գառնուկի մը նման: Եւ մինչեւ այսօր ամէն ազատական շարժումի համար, ըլլայ նոյն իսկ թուրքերու կողմէ, Հայը և միայն Հայն է որ կը տուժէ, Հայն է որ կը զոհուի թէ՛ կառավարութեան ձեռքով և թէ՛ դրացի մահմետականներու կողմէ:

Արդ, բողոքի, ինքնապաշտպանութեան և անյուր ու անօրինակ զոհողութեանց տեսակէտով ամեն ցեղերը գերազանցող հայ ցեղէն աւելի ինչ կը սպասեն մեր թուրք ազատականները:

Բռնակալութիւնը տապալելու համար ձեռք ձեռքի տանք, կըսեն մեզ: Բայց, կը հարցնենք անոնց. մեր ո՞ր ձեռքն է որ կուզէք ձեր ձեռքին կցել: Ի՞նչ որ ձեր մահմետական եղբայրները մեր այդ ձեռքը կտրատեցին երէկ և այսօր իսկ մեր դատաւէն հոսող արիւնը կը ծծեն անյադօրէն:

Թուրք ազատասէրները իրենց կոչումով ու թուուցիկներով ի զուրկը փնտռեն հայուն ձեռքը իրենց ձեռքին մէջ: արովհետեւ, առանց պոռոտախօսութեան պէտք է ըսել, թէ մեր ձեռքը կտրատուած է. բայց մեր սիրտը իրենց հետ է, եթէ անկեղծ են իրենց յայտարարութեանց մէջ: Բռնակալութեան դէմ բողոքի առաջին դրօշը Հայը բարձրացուցեր ու արիւնի գետերու մէջէ անցնելով զայն կանգնեց արդէն իտեւ ընդհանուր աշխարհի, հիմա կարգը թուրք կամ մահմետական ցեղերուն եկած է. օ՛ն, առաջ թող անցնին անոնք, վստահ ըլլալով թէ Հայ ցեղը իրենց ետեւը ունին կանգնած իբր բողոքի մարմնացումը: մեր թափած արիւնը և ցարդ մեր տուած զոհերու անհունութիւնը ապահոված է վարուած դատին արդարութիւնը:

Օ՛ն, առաջ անցէք թուրք ազատասէրներ, ձեր աշխարհին գոյնը տեսնենք ազատասիրութեան դրօշին շուրջ: Բաւ է ինչ որ ըսիք միայն լեզուով ու գրի:

չով. ձեր թիւի ստուարութիւնը և տիրող ցեղի ձեր հանգամանքը կապահովեն յաղթանակը: միայն թէ հաւատք ունեցէք ազատութեան դատին արդարութեանը վրայ, և օգնութիւն թախանձող աչքերով մի նայիք ձեր շուրջը: ձեր կորովի պակասը կը մատնէ ձեր այդ կոչերու ու թրուուցիկներու անհատնում շարքը: Ապահով եղէք կրկրկնեք թէ մեր համակրանքը, մեր սիրտը ձեզի հետ է. և որքան որ առ այժմ մեր ձեռքը ձեր ձեռքերուն մէջ չունենաք, վստահ եղէք թէ վրձնական վայրկեանին մենք Հայերս ալ կը հասնինք ձեր ետեւէն, մեր ակաւներովը յօշոտելու համար բռնակալութեան ժանտիրանը:

## ՅԱՅՆԵՐՈՒ ԳԱՂԹՈՒՄԸ

Պուլկարիոյ Յոյներու գաղթումը դէպի Յունաստան կը շարունակուի անընդհատ: Յունաստան կոչուող աղքատ և անբարեբեր երկիրը իր սնանկ կառավարութիւնով բնականաբար չի պիտի կրնայ պատսպարել և սնուցանել այն բիւրաւոր գաղթականները որոնք արդէն մեծաւ մասամբ նիւթական միջոցներէ զուրկ աւելի իրենց բաղդը ապահովելու յոյսով կը հեռանան ծննդավայրէն:

Գաղթականներու թիւը արդէն 15,000ը անցեր է, Հէլլէն կառավարութիւնը սկսած է մտադրութեան մատուցել Յունական մամուլին լուրջ մասը, ինչպէս «Իքօնօմիքի Հէլլաս», միջոցներ կը խորհի գաղթումի հոսանքը կասեցնելու, ու եւ կերպով համաձայնութեան մը գտնով Պուլկար կառավարութեան հետ:

Բայց միւս կողմէ մաս մը մոլեռանդներ ազգասիրական գործ մը կատարելու հաւանութեամբ կը թելադրեն Պուլկարիոյ յոյն հասարակութիւնը որ Աւետեաց երկիրը դիմեն, ուր իրենց պիտի չառայուի ամեն գիւրութիւն տուն

հող, դրամ եւ այլն: Յոյն մոլեռանդներու այդ խաբեպատիր թելադրանքին իբր մէկ նմուշը հոս կը դնենք Ֆիլիպէէն գաղթող յոյնի մը Ատրիանուպոլսէն գրած նամակը:

... հոստեղի յոյները մեզ շատ գէշ տանին: Գաղթականաց օգնող յանձնախումբը մեզ յայտնեց թէ Յունաստանի մէջ իւրաքանչիւր գաղթականի 200 հէքտար հող կը տրուի մշակելու, 3 հէքտար տունի եւ պարտէզի համար 1500 ֆր. տուն մը կառուցանելու համար, 900 ֆր. ուստետի առաջին տարւոյն համար ու պիտի շարունակուի: 700 ֆր. եզներ գնելու, 200 ֆր. սերսերմացուներ գնելու եւ ուրիշ գումարներ կը տրուին պէտք եղած ատեն: Արհեստաւորներուն կուտան 4000-ն 1000 ֆր. գրաւագումը կազմելու համար եւ 4500 ֆր. ընտանիքին միւս պէտքերուն համար: Այգեպաններուն պիտի տրուի 75 հէքտար այգի:

Ամենէ գիւրահաւան մէկը իսկ այս տողերը կարդալով պիտի կուսնէ թէ չլացուցիչ և խաբեպատիր խոստումներ են որ կընեն յոյն բաթրիօթները:

Պուլկարիոյ վերագրուած կեղեքումը և հարստահարութիւնը Յոյներու դէմ գրեթէ գոյուցիւն չունի: անցեալ տարուան պատահած տեղ դէպքերը չպիտի կրկնուին անգամ մըն ալ, բաւական է որ յոյն հրոսակախումբերը գաղթին Մակեդոնիոյ մէջ նորանոր վայրագութիւններ գործելէ: Յունաց տրտունջը վարժարաններու գրաւման մասին կըրնայ միայն մասամբ արդարացի համարուիլ, սակայն եթէ իրենք այդ կրթական յարկերուն մէջ հակապուլկար բոլորականտին շափէն աւելի ուժ տնայ չըլլային:

## ՅԱՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Խուճ մը ստահակներու իմ վրայ կատարած յարձակումին առթիւ ցաւակցական արտայայտութիւններ կըլլան հեռուէն ու մօտէն մեր բաղձաթիւ: համակրներու կողմէ: Ասոնց մեր շնորհակալութիւնը յայտնելով միատեղ, կը պատասխանենք թէ աւելի պէտք է ցաւիլ այնպիսիներուն վրայ որոնք չեն գիտեր ինչ կը գործեն: ԳՈՒՐՊԵԹԵԱՆ

# ՏՈՒՄԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Բեղրսպուրկ, 2 Յունիս

Նախարարապետը յայտարարեց թէ Տուման պէտք է անմիջապէս ընդունի կառավարութեան պահանջը 16 երեսփոխաններու նկատմամբ, որոնք ամբաստանուած են պետութեան դէմ դաւադրութեան մը պատճառաւ: Եթէ Տուման մերժէ այդ ընդունիլը, կառավարութիւնը այդ մերժումը պիտի նշանակուի իր չկամութիւնն աջակցելու կառավարութեան գործերուն, այդ պարագային պիտի մերժէ բոլոր պատասխանատուութիւնը պետութեան ապահովութեան նկատմամբ:

Գատէթները առաջարկեցին կառավարութեան այս առաջարկութիւնը յատուկ յանձնախումբի մը քննութեան յանձնել: Վիճաբանութիւնը խիստ փոփոխակից եղաւ: Կշտամբուեցան ընկերակցութեանը մեծ դաւաճանութեան եւ ուրիշ ոճերներու մէջ յանցաւոր դատուելուն համար:

Գատէթներու առաջարկութիւնը ընդունուեցաւ եւ որոշուեցաւ որ յանձնախումբը 22 անդամներէ բաղկանայ: Այդ յանձնախումբին մասնակցելու համար ուրիշ կուսակցութեանց մերժումին վրայ, յանձնախումբը կը կազմուի միայն գատէթներէն եւ ձախակողմի անդամներէն: Ուստի հաւանական է որ կառավարութեան առաջարկը մերժուի եւ այս պարագային Տումային լուծումը անխուսափելի կը լայ:

Կէս գիշերի մօտ դեռ յանձնախումբի նստիւթիւնը չէր լրացած:

Բեղրսպուրկ 2 Յունիս

Խաղախները Տումայի պալատը չըրջապատած կը մնան, կը հաւաստուի թէ նախարարութիւնը համբարախ է եւ հաստատարար որոշած է տեղի չտալ: Այս անսպասելի դէպքերը մեծ ազդեցութիւն կը գործեն քաղաքին վրայ, բայց չը կարծուի որ խռովութիւններ ծագին: Միայն երկաթուղիի պաշտօնէից գործադուլը հաւանական կերևի:

Ժողովի միջոցին նախարարապետ Մ. Սթոյիթին պահանջեց 16 սօսիալիստ-տաճկապարական երեսփոխաններու ձերբակալումը եւ արտահանութիւն ուղղեց 55 սօսիալիստ-տաճկապարական երեսփոխաններ զատարանի յանձնելու: Կը հաւաստուի թէ Գատէթները պիտի մերժեն այս առաջարկութիւնը եւ այս պարագային Տումային լուծումը տեղի պիտի ունենայ:

## Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

82

### ԱԽԱԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

ՆԱԽԱԶԱՆԸ

(Շար. նախորդ թիւէն)

Արդէն առտու եղած էր: Երկինքը պարզած էր իր անուշ կապոյտը:

Արարուց այդ անուշան փողոցէն ուղղակի քաղաքը տանող մեծ պողոտան անցաւ ու մուրացկաններու քայլ լիքով սկսաւ յառաջանալ:

Գիտէր թէ կէս օրէն առաջ քան տարկեալներուն քով երթալ կարելի էր. այդ պատճառաւ՝ երբ բանտին

Տումային պալատը չըրջապատուած է զինուորներով եւ ոստիկաններով:

Բեղրսպուրկ, 2 Յունիս

Սէվաստաօլէն կը հեռագրուի թէ «Սինօր» եւ «Թրիսփիլիա» անուն զրահաւորները նաւահանգիստ հասան եւ ալգիւրեցան իրենց ճամբան շարունակելէ, որովհետեւ նաւատիրներու կողմէ ապստամբութենէ մը կը վախցուէր: Շատ մը ձերբակալութիւններ եղան:

Տփղիս, 2 Յունիս

Եօթը մարդ յարձակեցան կառախումբի գանձապետին վրայ Ալէքսանդրօօլի եւ Տփղիսի մէջտեղ. յափշտակելին 25,000 ռուպլի: Աւազակները սպաննեցին ոստիկան մը որ կառախումբին կընկերակար ու զինաթափ ըրին միւս պաշտօնեաները: Ետոյ կառախումբը կեցուցին եւ անոնք լեռներուն մէջ կորսուեցան:

Բեղրսպուրկ 4 Յունիս

Կայսերական հրովարտակ մը Պետական Խորհուրդին ուղղուած կը հրամայէ՝ 1) Տուման լուծուի, 2) Նոր ընտրութիւնք սկսին սեպտեմբեր 1ին, 3) Երրորդ Տուման գումարուի յառաջիկայ Նոյ. 1ին: Ասկէ զատ այսօր հրատարակուեցան կայսերական մանիֆեսթ մը եւ ընտրութեան նոր օրէնք մը:

## ՀՆԴԿԱՍՏԱՆ

Խալախները եւ Պրահմանակախները

Այն ապստամբական շարժումը՝ որ այս ժամուս կը յուզէ Հնդկաստանը, երկու հակընդդէմ եւ տարամբօք ուժերու արդիւնքն է: Խնտուները եւ մահաճակատները որ զիրար յաւիտենապէս կատեն. եւ իրենց իրարու դէմ ունեցած ատելութիւնը Եւրոպացուց դէմ ունեցած ատելութեանն շատ բուռն է: Իսլամութիւնը եւ Պրահմանականութիւնը Հնդկաստանի մէջ այն է, ինչ որ էր կաթոլիկութիւնը եւ բողոքականութիւնը Ֆրանսայի մէջ: Բարթոլոմէոսի թուականին Եթէ մարդասպանութիւնները եւ աւարատութիւնները սահմանափակուեցան միայն Պենճէպի եւ Բենճէպի բազմամարդ կեդրոններուն մէջ, այս ապահովաբար որչափ զգուշաւորութեան նոյնչափ ալ անգիտական իշխանու-

ղուոր հասաւ, խնդրեց զոնապանէ: որ թոյլ տար իրեն ներս մտնելու: Դռնապանը զխու նշանով մը հասկցուց թէ՝ ազատ էր: Աւազակապետը ներս անցաւ ու աչքը չորսդին յառեց, Բանտին այն մասն, ուր կէս ժամու չափ շրջագայելու հրաման մը եկած էր Բարձր. Դուռնէն, ընդարձակ չէր: Երկաթապատ վանդակորմ մը կը բաժնէր այդ մասը փոքրիկ ու նեղ գաւթի մը ուր կը կենային զուրսէն եկողները:

Աւազակապետը նեղիկի գաւթին մէջ բաւական տուն սպասեց, Բանտապանը մօտենալով իրեն, հարցուց.

- Ի՞նչ կուզես, ծերուկ:
- Անկը տեսնել կո զէր, միմիջեց Աւազակապետը կեղծ ձայնով մը:
- Ի՞նչ ազգ ես:
- Ես:
- Այո՛:
- Հայ եմ:
- Հայ:
- Ծիշտ է:

Թեան աչալրջութեան կը պարտին: Այժմու շարժումը նոր ապստոյց մը կը ներկայացնէ այն հակառակութեան որ կայ ասիական երկու մեծ կրօններու մէջ, եւ սակայն թէ՛ մէկ կողմին եւ թէ՛ միւսին բաղձանքները խիստ զանազան են:

Մահմետականները Հնդկաստանի մէջ փոքրամասնութիւն կը կազմեն եւ 60 միլիոնէ աւելի չեն, մինչ Հնդկաստանը ունի 290 միլիոն բնակչութիւն: Ժի. զարուս մէջ աֆղանեան տէրութիւնը հաստատուելով Տէլհիի մէջ, այս քաղաքը Հնդկաստանի Խալափական կեդրոնը դրած էր: Հոս էր որ կաղակերպուեցաւ Սիւրահներու ահաբի ապստամբութիւնը որ վերջ գտաւ անգլիական տիրապետութեամբ:

Հնդկաստանի մահմետականները ապագային համար անկասկած են եւ կը պատրաստուին հանգարտօրէն առաջի տեղը գրաւելու: Հնդկական կառավարութեան մէջ, թէեւ կասկածաբեր օրինակներուն մը ցոյց կուտան Անգլիոյ հանդէպ: Առ այժմ քիչ բան կը պահանջեն. կը խորհին թէ կառավարութեան պաշտօններու մէջ ազգաւ անգլիացի եղողներու թիւին համապատասխան եւ նոյն աստիճան իրենցմէ ալ գտնուին: Խնտուներու հակառակութիւնը, այսինքն Պրահմանականները թէեւ աւելի աչքի կը զարնէ սարսափ չազդեր Անգլիոյ: Մահմանդ որ անոնք նոյնացեղ չեն:

Այս Խնտուները կը համարվում ինչ համախառններու մէջ, ուր անոնք չափազանց ախառասէր ուսանողներ կըլլան թէեւ շատ աղքատ: Այս մտաւորական Խնտուներու ըստուար մեծամասնութիւնը իրեն նպատակակէտ ունի կառավարական պաշտօններու մէջ մտնել: Ինչ որ ցարդ չի թոյլատրուի զուտ անգլիական ծագում չունեցողներու: «Փորի Խնդիր է խոյ» ըսած է Կալիկիթայի մէկ լրագրապետը: Այս մարդիկ իրենց բրինձը կուզեն ապահովել եւ ատկէ անդին անոնք կատարելապէս զոհ են անգլիական տիրապետութեանն: Իրենց ազգայնութիւնը լոկ բառ մըն է:

Ասով հանդերձ երկու ընդդիմացի շարժումները ընդհանուր կարգապահութեան համար վրդովեցուցիչ համեմատութիւններ կանեն թերակղզւոյն հիւսիսային կողմը, Արեւելքէն Արեւմուտք:

Անցեալ շարժում մէջ հարկ եղաւ ամբողջ գորաղունդ մը լուծել: Բենճէպի մէջ, որովհետեւ սպանները եւ են թասպանները խմբովին մերժեցին ոս-

տիկանութեան պաշտօն կատարել խոտովարաններու դէմ որոնք եւրոպական վաճառանոցներ թալանած էին: Միւս կողմէ տարածայնութիւն մը ելած էր թէ անգլիական կառավարութիւնը թունաւորել տուած է ջրհորները եւ աղբիւրները ու ժանտախտի վերագրուած շարժական հաղարարներու մահը այդ թոյնին հետեւանքն է: Տեղ տեղ օտար ելան կառավարութեան ներկայացուցիչներուն դէմ եւ եւրոպացի հասարակութիւնը մեծ փառանքներ անցուց: Բացուած խիստ քննութեամբ մը մեծ անցանք գաղտնի ընկերութեան մը երկու գործակալներ, որոնք տեսակ մը դեղ նետեր էին իրօք ջրհորներու եւ աղբիւրներու մէջ, իրենք իսկ տարածայնութիւն թէ կառավարութեան հրահանքին համաձայն կընէին այդ բանը: Այդ երկու յանցաւորները խիստ զատապարտութիւն կրեցին:

Հիմտուները ծանրաշարժ թէեւ, բայց դժուար է զանոնք կեցնել երբ գերագրիւ վիճակի մը հասած են. այս պատճառաւ սա վերջին ատենները ծագած ապստամբական երեւոյթները կալկաթայի կառավարութեան մտահոգութիւն պատճառեցին: սա ժողովուրդը գրգռողներու հանդէպ չափազանց հեզութեամբ վարուելէ յետոյ, ձեռք առնել սկսաւ ճնշում խիստ միջոցներով: Անգլիական կառավարութիւնը հիմտուներու աղմկալի եւ անկարգ ընդդիմացականութեանն մտահոգ չըլլար, բայց կը տեսնէ թէ ասոր քով կաւելնայ հնդիկ համացեղ իսլամութեան ընդդիմացութիւնը որ առանց բացայայտօրէն մէջնադ ելլելու կը պատրաստուի վճռական դեր մը խաղալ դէպքերը պատեհ առիթը քիչ մը ներկայացուցածնուն պէս: Առայժմ մահմետականները կը ձգտին զուտ անգլիացեղ քաղաքացիներ նկատուիլ: Իրիտանական հպարտութիւնը դեռ չէ զիջած այդ աստիճան հաւասարութիւն մը ընդունիլ: ուրիշ զիջումներ պիտի ընէ անշուշտ, բայց հարկ է գիտնալ թէ այդ ընելիք զիջումները բաւական պիտի ըլլան ներդաշնակութիւնը վերահաստատելու:

Պետական զանաչային պաշտօնեաները կացութիւնը գործնականի մէջ նուազ փառանքաւոր կը համարեն, քանի որ, կըսեն, անհասական տուրքը խաղազօտէն կը հաւաքուի այս պայմաններու մէջ: Եթէ յառաջիկայ հունձքը բաւականաչափ ըլլայ, եթէ աւերիչ երաշտութիւնը, Հնդկաստանի այս պատուհասը, ժողովուրդը սովի չը մատնէ:

նեց բանտապահը:

- Կը յիշեմ... բայց...
- Ի՞նչ բայց:
- Կուզեմ որ քովը տանիք զիտ:
- Ի՞նչպէս կըլլայ այդ... երբ չը գիտես թէ երբ ձերբակալուած է:
- Երէկ չէ առջի օրը ձերբակալուած է:
- Երէկ չէ առջի օրը... կեցիր, չըլլա՞յ թէ աւազակ մը կայ, ան է ըսածդ: Սանկ երկայն հասակ մը, լիք կազմուած մը կատաղի կերպարանք մը ու յաղթանքաւոր մարմին մը ունի: Դեռ երիտասարդ է, երեսուն տարու ըսեմ չը կայ: Երկու օր է կը շարադրուի, սակայն անունը չը գրուցնց:
- Ատ է... ատ ըլլալու է... նա հատ մըն ալ... դեռ ուրիշ ալ կուտամ... միայն թէ՛ քովը տար զիտ:
- Տանիք, ամա, թէ քու կեանքդ եւ թէ իմ վտանգի մը տակ կը մնան անկա չղթայապապ է ու առանձնաբան մը կը գտնուի:

- Ո՞վ է ուզածդ:
- Հոս չէ... ես ալ ան կը փնտնեմ:
- (Անունն ի՞նչ է.)
- Ի՞նչ գիտնամ... թոթովեց Աւազակապետը պահ մը իր շուրջը նայելէն ետքը: Սանկ մէկը... սանկ... ինչպէ՞ս ըսեմ... սանկ անուն մը... լեզուիս վրան է:
- Ե՞րբ ձերբակալուած է, գոչեց բանտապահը նեղացած եղանակով մը:
- Բայց՝ նա ձեզի ըլլա՞յ... փոփոց Աւազակապետը կողիկ գեղին մը դընելով բանտապահին ձեռքը մէջ:
- Բանտապահը գողգողալով այն կարգ մը շուրջներուն պէս, օրոնք անօթի եղած աւան յանկարծ ոսկոր մը կը տեսնէ:
- Ներքաւ մուրացկանին վրայ... եւ հասկցաւ թէ պճուտ փետուրներուն տակ ի գոտ պատառներ ունէր: Ուստի փոխեց քաղաքականութիւնը: Դէմքին վրայ պատկերուեցաւ ընչաքաղցու թեան ոգին:
- Աղէկ... չե՞ս յիշեր անունը, կրկ-

հինգուներու շարքումը անպատճառ վերջ պիտի գտնէ։ Այս պարագային կայսերական կառավարութիւնը այլեւս իր առջեւ պիտի ունենայ միայն իսլամական հաւակնութիւնները, որ կը ներկայանան թաթարներու միջոցով։ Երբեք, որոնց հետ ու եւ է եղանակաւ գործը պիտի կարգադրէ։

## Ե Գ Ի Պ Տ Ո Ս Ի Ս Է Զ

ԳԱՐՏՆԻ ԸՆԳԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գարտնի Երվարան խափի թերթը կը գրէ։

«Տարակոյս չիկայ որ գէշ ժամանակներու մէջ կոպիւրէր, Անանկ բաներ որ ասկէ առաջ բոլորովին անծանօթ էին Երկրպագական մտքին, հիմակ շատերու համար անասկ մը հիւանդութիւն դարձած են եւ մարդիկ կուրորէն գէպի իրենց ճակատագիրը կը խուժեն։ Այս կարգէն է նաեւ գարտնի ընկերութիւններու ներկայ գոյութիւնը, որու մասին ասկէ առաջ զրեցիք եւ մեր պաշտօնակիցներէն ոմանք բացէ իրաց ակնարկութիւններ կընեն։ Ասկէ չարիք մըն է որ կրնայ տարածուիլ եւ ամենամանր հետեւանքներ ունենալ եթէ իր օղբնաւորութեան մէջ առաջը չառնուի օրինաւոր միջոցներով։

Առանց մոխի կրակ չկայ եւ լուրեր որ տարիներէ ի վեր մէջտեղ կը նետուին մերթ ու կը վրձարանուին՝ չեն կրնար անհիմն ըլլալ։ Մեր ընթերցողները կը յիշեն թէ, վերջին երեք տարուան ընթացքին գանգատներ լուսեցան ձարգ մը չէյսերու եւ անհատներու մասին երկրին այլեւայլ կողմերէ։ Այս գանգատները գաղտնի ժողովներու եւ գէշ նպատակներու մասին էին, բայց, ամէն անգամուն ալ, Ազգայնական Մամուլը փութաց հերքել ամէն ինչ ու յայտարարել թէ, ակնարկուած անձները բոլորովին անմեղ ու ազնիւ մարդիկն են, իսկ ժողովները՝ բաց մեղքովորական բաներ։ Ամէն ատեն որ լուրերը նրապարակ նետուեցաւ, Ազգայնականները ուրացան թէ ուրեք քաղաքական կամ ցեղային գրգռում կայ, սակայն միեւնոյն լուրերը յաճախակի կը լուսին դարձնալ՝ աւելի զօրաւոր ու ջանքալի լուստերով։ Վերջին լուրը կը հասնի Պէնի-Սուէֆէն ուր հասած են Զ նշանաւոր Ազգայնականներ վերջին շարժումն, ասոնց ներկայութիւնը գրգռում ու կասկած

յառաջ բերած է։ Տեղացիները այս երկու Ազգայնական պարագայութիւններու այցելութեան մէջ գրգռում մը նշմարած են ու պատճառներ ունին հաստատելու թէ, անոնք ապստամբութիւն կը քարոզեն։ Պէնի-Սուէֆէն տիրող յարանուանութեան Որքան որ կարելի է վստահիլ այս կարգի ղեպերէ հանուած քնական ու տրամաբանական հետեւութեանց, Պէնի-Սուէֆէն թղթակիցները իրաւունք ունին նետուցնելու թէ, Գարտնի մէջ գաղտնի ընկերութիւն մը կազմուելու վրայ է որ իր մասնաճիւղերը պիտի ունենայ ամէն քաղաքներու կամ նահանգային գիւղերու մէջ։ Այս ընկերութեան նպատակը պիտի ըլլայ տարածել Ազգայնական գաղափարը եւ ուժ տալ այն անձներուն որ Երկրպագ ղեպի յեղափոխութիւն կը վարեն՝ անձնապէս հարստութիւն եւ աղղիցսութիւն չանշու համար։

Այս յոգեւածը գրուած պահուն՝ այցելութեան եկաւ, մեր բարեկամներէն մին որ շատ մը տարիներ վերին Երկրպագ ղեպերուն ու շարքի հետեւող մը եղած է եւ երկրին ու ժողովրդեան զգացումներուն վերաբերեալ խնդիրներու մէջ հեղինակութիւն մըն է։ Անիկայ կը կարծէ թէ գաղտնի ընկերութիւններ կը կազմուին շատ մը քաղաքներու մէջ, որուն գլխաւոր նըպատակներէն մին է՝ վտարել ամէն ինչ որ Անգլիական է։ Ասկէ զատ Ազգայնական թերթերը պիտի քաջաբար ու իրաւունքով մերթնանան ամէն կողմ ընդհանրապէս բոլոր եւրոպացիներուն դէմ պայքար պիտի մղուի՝ իրենց առօրեայ գործառնութեանց մէջ՝ աջակցութեամբ միացեալ ազգայնականներու ջանքերուն եւ այլն։ Ինչպէս կը տեսնուի եթէ թոյլ տրուի որ այս ընկերութիւնները տարածուին ու աճեն։ Քրիստոնեաներն են որ պիտի տուծեն ընդհանրապէս։

Կրնայ ըլլալ որ ասոնք քիչ մը չափազանցութիւններ ըլլան, բայց տարակոյս չիկայ թէ, ներկայիս գաղտնի ընկերութիւններ կը կազմուին կոր, որոնց նպատակն է վրասել բարենորոգմանց գաղտնի ինչպէս նաեւ քրիստոնեաներու եւ Երկրպագի օտարականներու շահերուն։ Եթէ առանց յապաղումի գորաւոր եւ կտրուկ միջոցներ ձեռք չառնուին, խնդիրը կրնայ ծանր կերպարանք առնել։ Չարիքը տարած-

ուելէն առաջ առնուած ամէն մէկ քայլ, փոխորդը պայթելէն վերջ առնուած հարիւր քայլէն աւելի օգտակար պիտի ըլլայ։

«ԱԶԱՏ ԲԵՄ»

## ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՄԱՐԱՆ




Ներկայիս հարկ կը համարուի ի գիտութիւն Վառնայի հայ հասարակութեան յայտարարել թէ յառաջիկայ հինգշաբթի, Յունիս 12, կսկիսին քաղաքի Սեդ. Երկսեռ վարժարանաց տարեկան հարցաքննութիւնները, որոնք հրապարակային են եւ որոնց կարող են հետեւաւոր ներկայ գտնուիլ ինչպէս երկսեռ ուսանողաց ծնողները նոյնպէս եւ բոլոր փափագող ազգայինք։

Հարցաքննութիւնները կը կատարուին Հոգաբարձութեան կողմէ կանխապէս պատրաստուած ժամանակացոյցի համեմատ եւ կը տեւեն մինչեւ ամսոյս 20ը։

Քննութիւնը կսկիսն առաւօտեան ժամը 9ին եւ կը տեւեն մինչեւ 12 իսկ կէսօրէն յետոյ ժամը 2-4։


Հոգաբարձութիւն  
Վառնայի Ազգ. Երկ վարժարանաց

## ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԹԵՐԳՄԱՆ



Ներկայիս կուգանք ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ Հայկական ընթերցարանը տեղափոխուած է Ուլիցա Տրակոման, Պուլկար ընթերցարանի քովի Պալքան անուն սրճարանի տեղը։ Այս ամիսի կուգանք ծանուցանել նաեւ թէ ընթերցարանն իրեն պէտք չեղած քանի մը կարասիներ սնի որ կուգէ ծախել։ Այդ կարասիներուն մէջ կը գտնուին քանի մը մարմարեայ քարով սեղաններ, փայտեայ նստարաններ, աթոռներ, երեք միւս կահուելիք լամպա, գաւաթներ, պոսակներ եւ այլն։ Անոնք որ կը փափաքին գնել թող հաճին դիմել Տրակ. Յ. Կ. Ծանկաւեանի խանութը Դայսէրի շարք թիւ 760։

Վարչութիւն



— Ատոր ժամանակը չէ... չուտաւ առ այս փոքրիկ զաչոյնն ու սրուակը... ընդհատեց Աւագակապետը. միացեալ գիտես ի՞նչ ընելու է։ Մնա՛ս բարով. Հայրենեաց անմահ զաւակ... մնաս բարով։

Վարդով ընդունեց զաչոյնն ու սրուակն, որուն մէջ մութ գոյն ու սարսաղի հեղուկ մը լեցուած էր կամաց մը կուրծքին վրայ պահեց զանոնք ու վերջին անգամ ըլլալով համարեց Աւագակապետին ձեռքերն ու ոտքերը։

Աւագակապետը պատրաստուած էր մեկնելու, ա՛յս բանտապահին շփոթ լսեց։ Աճապարանքով մը նկուղէն դուրս ելաւ ու բանտին շփոթ մասէն Բանտապահին ձեռքը կտրեց զինքն մըն ալ սպրդեցուց ու անշուշտ ինչ կերպով մը դուռնէն դուրս նետեց ինքզինքը։

Շարքի մը ետքը կառավարութեան բարձրագոյն հրամանի մը համաձայն, Վառնայի կոնստապոլ Ստեփան

## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տֆղիսի Մշակ, Երկրի-Չայնը եւ Փայրակ թերթերը դադարած են կառավարական հրամանաւ մայիս 12ին։ Հերմէս տպարանը՝ ուր կը տպագրուէին Մշակ եւ Երկրի-Չայնը, զոյգուած է։

Փայրակին տեղ սկսած է հրատարակուիլ Ժայռ անունով օրաթերթ մը։

— Խրքահայաստանէն դէպի կովկաս հայ գաղթականներու հոսանքը աւելցած է այս վերջօրս։ Թուրք կառավարութիւնը անցագրի եւ մեկնումի դիւրութիւններ կուտայ անոնց, որպէսզի հայերը պակսին այդ երկրէն, ուր տեղ կը բանայ մահմետական նորեկներու։

— Բարիգի Հայկական Միութեան Ընդհ. Ժողովը տեղի ունեցեր է մայիս 16ին, ժողովին ներկայացուած տարեկան տեղեկագիրէն քաղուած մը պէտի հրատարակել մեր յաջորդ թիւով։

— Սուտանի Խարթում քաղաքին մէջ հայ եկեղեցի եւ վարժարան կառուցանելու համար ձեռնարկութիւններ կըլլան Երկրպագի Առաջնորդարանին կողմէ։ Վսեմ Պողոս փաշա Նուպար խոստում առեր է Սուտանի կառավարչապետէն ուրիշ ազգերու տրուած հողերուն մօտերը բաժին մըն ալ Հայոց տրամադրելի ընելու։

— Երուսաղեմայ Միաբանական ժողովը մայիս 15ին Լուսարարապետի ընտրութիւն կատարելով, 36 ձայնէն 20 ձայնի միծամասնութեամբ Լուսարարապետ ընտրած է Ժողովին ատենապետը, Տէր Դաւիթ վրդ. Տէրտէրեան։

## Մ Շ Ա Կ

Օրաթերթ քաղաքական, գրական Բանեկցիքը՝ Երուսաղեմ համար 30 ֆր. Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաստանի եւ Ռուսաստանի համար 10 ռուպլի տարեկան։  
Հասցէ՝ Խմբագրութիւն «ՄՇԱԿ»  
Կովկաս Թիֆլիս

— Ի՞նչու ատանկ ըլլայ... դուն կրնաս յարմար տան մը գտնել։ Եւ քանի որ ատանկարանի մը մէջ կը գտնուի ան, մէկը չը կրնար տեսնել մեզ։ Կառավարողն զիս հոն... անալիզաւ։ Զըլլա՞ր ատանկով... Յետոյ նուէր մըն ալ կ'առնես... հասկցա՞ր։

Բանտապահը պահ մը կեցաւ... մտածեց... չորս գին նայեցաւ... աւագակի մը պէս ամեն անկիւնը լաւ մը դիտեց... Երբ այս լուսութեամբ կատարուած գործը վերջացաւ, կամացուկ մը աւագակապետին մօտեցաւ ու ըսաւ։

— Հայտէ, ձերուկս, ետեւէս ե կուր։

Ու առաջնորդեց զինքը միջին, քստմնելի ու մահաբոյր նկուղ մը, որուն զնտան անուն կուտան։

— Նա... մարի ներս... փափաց բանտապահը՝ դուրս բանալով, Երբ պղտիկ չվոց մը հանեմ, իսկոյն դուրս եկուր... հասկցա՞ր։

— Հասկցայ... պատասխանեց Աւագակապետն ու նկուղին մէջ մտաւ։

Զինակիրներու պետը մէկ անկիւնը կ'ծածուած կը մնար. երբ մութին մէջ գուռին բացուիլը, մարդերու փափալը լսեց, պահ մը կարծեց թէ հարցաքննիչ գատաւորն էր եկողը. հետեւաբար անտարբեր կերպով մը սպասեց։

Աւագակապետը խորխորակով գրտաւ այդ հսկայ Զինակիրի Յետոյ ձեռքը անոր ուսին վրայ դրաւ ու ըսաւ։

— Չայն տուր, Վարդով... ես Աւագակապետն եմ։

Այս նախադասութիւնը հնչեց հըս. կայ երիտասարդն, որ ծանր չղիմաներու ներքեւ յաճում մը քրաւ ու ինկաւ Աւագակապետին գրկը հեծկտալով։

— Ի՞նչպէս, ի՞նչ կերպով հոս ե կաք, վարպետ, զոգողաց թշուառ բան, տարեկալը։ Ա՛խ, չը նայի՞ք արեւն անգամ չը կրնար հոս թափուցել։

հրապարակային դատի մը ենթարկեց Զինակիրներու պետի, առարկելով որ աւագակ մըն էր ան։

Դատավարութիւնն միմիայն ուրիշ բանի համար չէր, թէ ոչ ժողովուրդին ցոյց տալ որ ամեն աւագակ ու զաւակ կանուխ իր օձիքը պիտի չազատէ օրինաց ու արդարութեան ձեռքէն։

Երկուշաբթի առտու մը, դատի սկսում պահուն, Աւագակապետը հագած պարսկ վաճառականներու յատուկ տարազն ու նազելաճիւք քալուածքով մը գատարանը մտաւ։

Զը նայելով մամանակներու. երկուշաբթի գրութեան, չը նայելով այն գարշելի տրամադրութեան որուն մէջ կը գտնուէր կառավարութիւնը հանգէպ հայ ժողովուրդին... դարձեալ խուռն բազմութիւն մը լեցուած էր ներս, որուն մեծ մասը հայ էր։

(Շարունակելի)

